



# Ավետիք Իսահակյան

## Հայաստանին

Դու, երկնամերձ իմ հայրենիք, դո՛ւ, հինավուրց ի՛նչ Հայաստան,  
Անմահ բանի սպասարկու, խորհուրդ խորին, ի՛նչ Հայաստան,  
Դո՛ւ, ալևոր տեսիլների ստեղծագործ ի՛նչ Հայաստան,  
Եվ նոր խոսքի ավետաբեր, հազարավերք ի՛նչ Հայաստան:

Սաղավարտներ դրած կանգնած քո լեռների կոռ երկաթի,  
Արորներըդ արյունազանգ՝ արդարության ցորեն արտի.  
Երդիկներիդ ծուխերն անուշ՝ նվիրական Նավասարդի,  
Հին օրերի երգ սրբազան, սեղան գոհի, ի՛նչ Հայաստան:

Քո գետերը՝ տեգ սուրացող, ազատատենչ, կամուրջ քանդող  
Քաղաքներիդ նոխիրներից ծլած վարդերն արյուն – բուրող.  
Շարականները՝ հոգեբուխ, շինականիդ երգը՝ լացող.  
Հին սերերի, նոր կարոտի ոսկի բամբիռ, ի՛նչ Հայաստան:

Դատրիկներըդ քո փափկասուն՝ անապատի գայլերին կեր,  
Որբուկները՝ մերկ ու ծարավ, սովալլուկ, մահի ընկեր.  
Բախտիդ վրա՝ ծափ ու ծիծաղ, սփռփանքի ունայն խոսքեր,  
Նոր հույսերի, նոր երգերի երազաբույր ի՛նչ Հայաստան:

Բարեկամներից վաճառված, անիրավված ի՛նչ հայրենիք,  
Ոսոխներիդ կրրունկի տակ ավերակված ո՛րք հայրենիք,  
Սարսափներով, եղեռներով հավերժացած հի՛նչ հայրենիք,  
Արյունիդ մեջ սուրբ իրավունք, հոգիդ արև, ի՛նչ Հայաստան:

Կրթունկները համբավ տանող պանդուխտներիդ աշխարհալած,  
Նահատակված տաճարներիդ գմբեթները երկնապաց,  
Մագաղաթներիդ արյունաներկ՝ ձայն հեծության, հառաչանաց,  
Հրնուց ուխտի վրկայարան, ավանդատուն, ի՛նչ Հայաստան:

Ծիրանավոր քաջ – Մասիսը՝ սպարապետ քեզ պահապան,  
Ծերուկները ճակատագրիդ ճամփաների սուրբ օրհնաբան,  
Նոյ – Նահապետ աստվածատես՝ ածուններիդ վեհ այգեպան,  
Մանուկներիդ ու կույսերիդ արյան հրնձան, ի՛նչ Հայաստան:

Արդարախոս ու մեծասքանչ քո հին լեզվով օրհներգըված,  
Լուսավորչի լույս կանթեղով երկինքները լուսերանգված,  
Անճառելի ու դարերի տանջանքներով հոգիացած,  
Հրրաշափառ քո Հարությանք՝ նորամանուկ ի՛նչ Հայաստան:

1921

Վենետիկ